№ 86 Մայիսի 14 (26) 1881 Մայիսի 14 (26) № 86

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լուսաւորութիւն և տնտեսական ոյժ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիա. Ֆրանսիա. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ կինը.

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՅԺ

—

V

Ներկայ յօդուածով մենք վերջացնում ենք մեր յօդուածների շարքը, որոնց գրելը առիթ տուեց մեզ մեր աշխատակից Գրիգոր Նիկողոսեանի յարուցած խնդիրը: Մենք կրկնում ենք՝ մեր աշխատակցի մտքերում կարող են լինել ծայրայեղութիւններ, մեր մտքերի մէջ կարող են լինել պակասութիւններ, բայց նոյն իսկ հարցը այն աստիճան նշանաւոր է, որ մենք նրա իրագործելը համարում ենք միակ ճանապարհ Թիւրքաց Հայաստանի ապագայ բարօրութեանը հասնելու համար:

Մեզ գուցէ կը հարցնեն. դուք ցանկանում էք, ուրեմն, որ ձեր առաջարկութիւնները անմիջապէս իրագործվեն: Դրան մենք կը պատասխանենք՝ որ ազգերի մէջ այդ տեսակ մեծ յեղափոխութիւնները մի տարվայ ընթացքում չեն կատարվում, այլ փոքր առ փոքր: Դարերով Կ. Պօլիսը կտրված է մնացել Հայաստանից, անտարբեր է եղել դէպի Հայաստանի ամենաանհրաժեշտ, կենսական պէտքերը,—ուրեմն ի՞նչպէս կարող ենք յուսալ մեր քարոզածը իսկոյն իրագործված տեսնել.... Ցանկալի է, ի հարկէ, որ մեր բոլոր ասածներից մի բան ամենից շուտ կատարվի, այն է, որ Կ. Պօլսի ինտելիգենցիային պատկանող այն հայ երիտասարդութիւնը, որ ոչինչ կապերով կապված չէ Թիւրքաց մայրաքաղաքի հետ, հասկանայ որ ազգի պակասութիւնների դէմ գանգատվելով, մամուլի, դպրոցների, ազգային հիմնարկութեանց թերութիւնների, ժողովրդի անշարժ և անտարբեր ոգու դէմ բողոքելով, հայի իր հայրենիքից անգաղափար գաղթելը պախարակելով, բայց մի և նոյն ժամանակ Կ. Պօլսում, օտար հողի վրա նստելով,—բան չի դառնայ.... Դժգոհ էք, բողոքում էք, քննադատում էք,—գնացէք ինքներդ Հայաստան, որի ամբոխին պակաս են առաջնորդներ և այնտեղ գործեցէք:

Իսկ մեր յարուցած խնդրի միւս կողմերը, հայրենիքի տնտեսական դրութեան բարւոքելը, երկրի արդիւնաբերութեան բարձրացնելը, արհեստանոցների հիմնելը, ընկերութեան հաստատելը և Հայաստանի հետ նրա անմիջական յարաբերութիւններն ունենալը,—այդ բոլորը կարող է կատարվել փոքր առ փոքր, քայլ առ քայլ, և ոչ թէ յանկարծակի: Եթէ առաջին տարվայ ընթացքում ուղարկվեն Հայաստան մի երկու ուսուցիչ, մի երկու բժիշկ, հիմնվի մի արհեստանոց, հետևեալ տարին հիմնվի մի այլ արհեստանոց և մի ագարակ, երրորդ տարին գնվի, դիցուք, մի կտոր գետին, որի վրա թէև փոքր դիրքով, մշակվի խելացի կերպով երկրի մի որ և է բերք, չորրորդ տարի մի գաւառի մէջ հիմնվի գիւղացիների խնայողութեան մի ընկերութիւն կամ փոխատու մի գանձարան, որ կազատի գիւղացիներին գուցէ նոյն իսկ հայ վաշխառուներից փողերը մեծ տոկոսով փոխառնելու անհրաժեշտութիւնից, և գործը հետզհետէ և քայլ առ քայլ գնայ այդ ճանապարհով, իւրաքանչիւր տարին մի բան աւելացնելով արդէն եղածի վրա,—մենք մեր առաջարկութեան գործը աջողված կը համարենք: Աչքի առաջ ունենալով որ Կ. Պօլիս դարերով ոչինչ չէ արել Հայաստանի համար, բացի ազգային երգեր հեղինակելուց, այժմ իւրաքանչիւր տարի գոնէ մի քայլ անելով մեր ցոյց տուած ծրագրի իրագործման ճանապարհի վրա, ժամանակով գործը կաջողվի:

Ուրիշ կողմից մեզ կարող են նկատել թէ ապարդիւն է հիմնել արուեստագործական կամ երկրագործական դպրոցներ, հիմնել արհեստանոցներ, գործարաններ կամ ֆերմաներ, քանի որ երկրի մէջ նահապետական կերպով և փոքր քանակութեամբ էլ պատրաստվող արդիւնքները ելք չեն գտնում, չեն վաճառահանվում, ի՞նչ օգուտ, ուրեմն, բարելաւել արդիւնաբերութեան տեսակը և ձևը ու շատացնել նրա քանակութիւնը: Այդ նկատողութիւնը ուղիղ է և այդ պատճառով հիմնելով արուեստագործական կամ երկրագործական դպրոցներ, կազմելով գիւղացիների արդիւնաբերող ընկերութիւններ և հաստատելով արհեստանոցներ, պէտք է զուգընթացաբար այդ բոլոր ձեռնարկութիւնների հետ մտածել և վաճառահանութեան ընկերութիւնների հիմնելու մասին, որպէս զի կատարելագործված և աւելի մեծ քանակութեամբ պատրաստվող արդիւնքը ելք, առնողներ գտնի, թէ երկրի մէջ և թէ երկրից դուրս:

Այդտեղ աւելորդ չենք համարում կրկնել, որ երկրի տնտեսական բարւոքման գործը առաջ տանելու համար պէտք է կապիտալների ընկերակցութիւնը, հասարակական ոյժերի համերաշխ գործակցութիւնը և ոչ թէ մի անհատի ինիցիատիվը, որի գործողութիւնների վրա անկարելի է վերահսկել: Մի մասնաւոր մարդու եռանդը շատ գովելի է, բայց կարող է և ապարդիւն լինել. մի մարդ, որ ոչ հոգևոր իշխանութեան, ոչ հասարակութեան մէջ հիմնված մի ընկերութեան, ոչ ազգային ժողովի հաւատարմատար է, անընդհատ հաւաքում է ահագին գումարներ, դիցուք մի երկրագործական դպրոց հիմնելու համար.... Այդ մարդը գործում է կատարելապէս անկօնտրոլ կերպով. նա կարող է և շատ լաւ մարդ լինել, նրա գործը կարող է աջողվել, բայց նա կարող է լինել և մի բաղդախնդիր, ուրեմն նրա հանգանակած բոլոր գումարները կարող են զուր կորչել:

Մեր յօդուածները կարդալուց յետոյ, մեզ կարող են նկատել և հետևեալը. „Ձեր յայտնած մտքերի տեսական կողմի հետ մենք համաձայն ենք, բայց հազիւ թէ ձեր առաջարկութիւնները կարող են իրագործվել Թիւրքաց Հայաստանում, քանի որ այդ երկրում չը կայ ոչ օրէնքի կողմից ապահովութիւն կամայականութեան դէմ, ոչ էլ, եթէ այդպէս կարելի է ասել, պօլիցիական ապահովութիւն՝ աւազակների և կողոպտութիւնների դէմ: Այդ տեսակ ան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԻՆԸ

—

(Մէկ հատուած պ. Գանկէվիչի դասախօսութիւնից)

Իրանց անբարոյականութեամբ յայտնի արևելեան բոլոր կանանցից մենք միայն մէկին ենք ճանաչում, որը չը նայելով իրան սպառնացող բազմաթիւ վտանգներին, խստութեամբ պահպանել է իր բարքերի մաքրութիւնը՝ այդ կինը—հայուհին է:

Մեր ժամանակակից ճանապարհորդների և գրողների ամենամեծ պակասութիւնը այն է, որ նրանք շատ անփոյթ կերպով են կազմում իրանց պատմութիւնները և նկարագրութիւնները, որոնց մէջ ոչ ճշգութիւն կայ և ոչ անկողմնապահութիւն, որոնք անհրաժեշտ են թէ հետաքրքրութիւնը շարժելու և թէ նոյնպէս առհասարակ խրատելու համար: Մինչև այժմ օտար լեզուով ոչ մէկ հեղինակութիւն չը կայ, որի մէջ խօսվելիս լինէր Հայաստանի մասին և հայկական ժողովրդին վերաբերեալ բոլոր հանգամանքները խորը ուսումնասիրված լինէր: Այդ պատճառով և մենք այդ ժողովրդի մասին միայն այն, մեծ մասամբ նուազ տեղեկութիւններն ունենք, որոնք մենք քաղում ենք էնցիկլօպէդիաներից և ընդհանուր պատմութեան ու աշխարհագրութեան ձեռնարկներից:

Բայց հայ ժողովուրդը արժանի է, որ դէպի նրան աւելի ծանր վերաբերվեն, որովհետև այն ժամանակից որ հայերը քրիստոնէութիւնը ընդունեցին (տասն և հինգ դար առաջ), այս ազգի անունը շատ անգամ փառաւորվեցաւ պատմութեան մէջ: Ասիական բոլոր ժողովուրդներից իսկական նշանակութիւն միայն հայ ժողովուրդն ունի, որովհետև նրա մէջ քաղաքակրթութեան տարրեր կան, որ բոլորովին անծանօթ են նրա բոլոր հարևան ժողովուրդներին: Մենք մեր առարկայից կը հեռանայինք, եթէ մտադրվէինք խօսել Հայաստանի փայլուն պատմական անցեալի վրա. բայց մեզ անհրաժեշտ է դառնալ դէպի այդ անցեալը, պարզելու համար ամեն կողմից նշանաւոր և հաստատող այն փաստը, որ երբեմն ընդարձակ և միայն ներկայ ժամանակում աշխարհագրական դրութեամբ փոքրացած այդ երկիրը, այնու ամենայնիւ, պահպանեց այնքան կենսական ուժեր, որ մի քանի դար շարունակ նրան չը կարողացան թուլացնել ոչ հռօմայեցիք, ոչ պարսիկները և ոչ թիւրքերը: Քրիստոնէական լուսաւորված Հայաստանը ամեն ժամանակներում պէտք է Ասիայի հետ կռւէր, և միայն, երկար և հերոսական ընդդիմադրութեան շնորհիւ, նրան աջողվեցաւ ազատվել թիւրքերի հալածանքներից մէկ կողմից և հարևանների շարունակ յարձակումներից միւս կողմից, և ապաստան որոնել այնտեղ, ուր նրա կրօնը և նրա լեզուն, որ ամբողջ աշխարհում ամենահինն է, կը կարողանային ապաստան գտնել:

Որքան անգամ նախանձը գլխաւորվում էր հայերի դէմ, և որպէս յաճախ, տեսնելով նրա նիւթական բարւոքման աճումը, շատերը հարցնում էին իրանց վատ ծածկված դառնութեամբ. Ինչպէս կարողացաւ այդ չարչարված ժողովուրդը կռւել անաջողութիւնների դէմ, ձեռք բերել միջոցներ, իր անցեալի բոլոր աւանդութիւնները անձեռնամխելի պահպանել, հաստատուն մնալ իր աւերակների մէջ և յոյսը չը կորցնել մինչև անգամ այնպիսի հանգամանքներում, երբ մեծ ազգերն անգամ, անխնայութեամբ տառապած՝ ոչնչանում են, չը նայելով իրանց զօրութեանը:

Մենք կարող ենք պատասխանել այդ հարցին. Երբ ժողովուրդը, չենթարկվելով ճնշող հանգամանքների զօրութեանը, ընտրում է իրան համար որպէս դէվիզ հետևեալ երեք խօսքերը՝ աշխատանք, հաւատ և ընտանիք, նա արդէն պատրաստված է փոթորիկի բոլոր վտանգներից, նա զգում է, որ օրից օր նրա ուժերը աճում են և հաստատ քայլով գնում է առաջադիմութեան ճանապարհի վրա, և, հետևապէս, փրկութեան շաւղի վրա:

Ոչ ոք չի հակառակվի այն բանի դէմ, որ հայ ժողովուրդը—մշակ ժողովուրդ է և որ նրա այդքան նախանձ գրգռող բարօրութիւնը, միայն նրա ծանր և անխոնջ աշխատանքի արդիւնքն է: Տասն և հինգ դար առաջ հայերը քրիստոնէութիւն ընդունեցին և այդ ժամանակից նրանց հաւատի մէջ չէ նկատված ոչ մի խախտում: Վաղ ժամանակից լուսաւորութիւնը դրեց Հայաստանը, երկրի այս փոքրիկ անկիւնը, եւրոպական քաղաքակրթութեան բաւական բարձր աստիճանի վրա: Նրա նիւթական զարգացումը, բարօրութեան այս զօրեղ տարրը, իր գլխաւոր զօրութիւնը քաղեց լուսաւորութիւնից և բարոյականութիւնից և յետոյ իր կողմից ազդեց բարքերի վրա, որովհետև աշխատող և ծախսող ժողովրդի համար առաքինութիւնը աւելի մատչելի է, քան թէ իր օրերը ծուլութեան մէջ անցկացնող մի ժողովրդի համար:

Տնտեսութեան և խնայողութեան ոգին, յարգանք դէպի սրբութիւնը և սէր դէպի ընտանիքը պահպանվում են հայ ազգի մէջ, շնորհիւ նրա կնոջ, որը լիակատար տիրում է ընտանեկան կեանքում (պէտք է նկատել, որ մենք այդպէս խօսելով, հասկանում ենք միայն կնոջ բարոյական ազդեցութիւնը շրջապատողների վրա, տան մէջ մնացողների վրա, որովհետև գործերը—բացառապէս տղամարդկանց ձեռքումն են:)

Հայերի մօտ ընտանեկան երջանկութիւնը կախված է ամուսինների փոխադարձ համաձայնութիւնից: Տղամարդը անխոնջ աշխատում է, կինը տնտեսութեան և կարգին է նայում տան մէջ և հոգում է նրա մէջ խաղաղութիւն պահպանել, որը զօրեղ ներգործութիւն ունի տան մէջ բոլոր ապրողների վրա: Ընտանիքի գլուխը հաւատացած է, որ տուն վերադառնալով, նա կը տեսնի իր կնոջ ժպտող դէմքը և դէպի իրան մեկնված մանուկների ձեռքերը, որոնք սիրով բարևում են նրան: Երբ տղամարդը տանն է, իր սրտին մօտիկ արարածների շրջանում, նա մոռանում է իր օրական աշխատանքը: Ընտանեկան ուրախութիւնները մշակի ամենալաւ պարգևներն են:

Հայ կինը կրթում է մանուկներին ծնողական իշխանութեան հնազանդութեան մէջ և իր կրօնի վարդապետութիւններին համաձայն: Եթէ նա քաղաքումն է ապրում, որտեղ մի որ և է ուսումնարան կայ, նա անպատճառ այնտեղ է ուղարկում իր զաւակներին: Աղջիկների կրթութեան վրա առանձին ուշադրութիւն է դարձնվում և ամբողջ Հայաստանը կարող է պարծենալ նրանով, որ նա դեռ ես չը ներկայացրեց աշխարհին այն գայթակղող և հրապուրիչ պատկերներից և ոչ մէկը, որոնց վրա նկարվում են՝ շնութիւն, անհարազատ ծնունդ և պրոստիտուցիա: Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում հայ կինը մեծ դեր է խաղում ընտանիքի մէջ: Ընտանիքը, ինչպէս արդէն վերևն ասված աջող գիւղ ունեցող երկրի մէջ մի բան սկսելու համար մեծ զոհաբերութիւններ են հարկաւոր։"

Ի հարկէ, կը պատասխանենք մենք, մեծ զոհաբերութիւններ են հարկաւոր։ Ժողովրդի մէջ գործ կատարելը, շատ կողմերից անապահով երկրի մէջ գործելը, հանդիպելով անթիւ արգելքների, խոչնդոտների, գուցէ սկզբից կատարեալ անաջողութիւնների,—աւելի դժուար է, ի հարկէ, քան թէ Բերայի կամ Գալատայի մի յարմար սենեակում նստելով փափուկ բազկաթոռների վրա գանգատվել ազգի թշուառութիւնների դէմ, գրել բանաստեղծութիւններ, թարգմանել ֆրանսիականից գրքեր և յօրինել ընկերութիւնների ծրագիրներ այն երկրի և ժողովրդի համար, որին չէք ճանաչում...

Եթէ ճշմարիտ գործել էք ուզում, պէտք է առաջուց իմանաք որ գործը առանց զոհաբերութիւնների չի լինի։

Մի բան էլ չը պէտք է մոռանաք. դուք գանգատվում էք տէրութեան պաշտօնեաների կամայականութեան և հարստահարութեան դէմ, աւազակների կողոպտութիւնների դէմ,—բայց թողնում էք տգէտ և անպաշտպան ամբոխը առանց մտաւոր առաջնորդների։ Կ. Պօլսում հաւաքվել է ամբողջ ինտելիգէնցիան և զարմանում է որ տգէտ ու անպաշտպան հայաստանցի ժողովուրդը կողոպտվում է, հարստահարվում է առանց իր մէջ առաջնորդներ ունենալու....

Այդ ցաւալի երեւոյթը նշմարվում է և մեզ մօտ, Անդրկովկասում։ Մի հասարակ հայ գիւղացի կարողացել է բարձրագոյն ուսում ստանալ, ուսումնասիրել է իրաւաբանութիւնը կամ բժշկութիւնը, կամ մի այլ առարկայ։ Այդ գիւղացին այնպիսի մեծ կարծիք ունի իր մասին, մի և նոյն ժամանակ այնքան քիչ համերաշխութեան զգացմունք ունի դէպի իր համագիւղացիները, որ լայեղ չէ անում գիւղը վերադառնալ. իրաւաբան գիւղացին պէտք է անպատճառ նահանգական դատարանի կամ դատաստանական պալատի մէջ երդուեալ հաւատարմատար լինի, բժիշկ գիւղացին պէտք է անպատճառ մայրաքաղաքի բարձր դասակարգի բժիշկ դառնայ։ Բարձրագոյն ուսում ստացած հայ գիւղացին ոչ այնքան համեստութիւն, ոչ էլ այնքան ազգասիրութիւն ունի, որ բժիշկ կամ իրաւաբան դառնալուց յետոյ նուիրի իր ոյժերը իր գիւղի ծառայութեանը, մինը տանուտէր ընտրվի իր գիւղում, միւսը բժշկի իր համագիւղացիներին։ Գիւղի լաւ ոյժերը գնում կորչում են քաղաքներում, իսկ գիւղը, գաւառը մնում են առանց մտաւոր առաջնորդների։ Բարձրագոյն ուսում ստացած գիւղացին կարող էր սովորեցնել իր համագիւղացիներին տնտեսութեան և կենցաղավարութեան աւելի խելացի միջոցներ, առաջնորդել նրանց։ Աւազակներ են անհանգստացնում գիւղը,—նա կը սովորեցնի գիւղացիներին ինչպէս պաշտպան են աւազակների դէմ։ Տէրութեան պաշտօնեայի հետ յարաբերութիւնների մէջ ժողովուրդը պէտք ունի հմուտ իրաւաբանի,—բարձրագոյն ուսում առածը կարող է նրան օգնել այդ գործի մէջ։ Եթէ մի պաշտօնեայ որ և է կամայականութիւն գործի,—նա իրան զսպված կը տեսնի հանդիպելով գիւղացիների մէջ մի հմուտ իրաւաբան տանուտէրի և աւելի յարգանքով կը վարվի գիւղացիների հետ, և այլն....

Թիւրքաց Հայաստանի վերաբերութեամբ մեր բոլոր ասածներից վերջը մեզ կարող են պատասխանել. այդ բոլորը լաւ է, բայց առաջ Հայաստանը թող ստանայ խոստացած ինքնավարութիւն, յետոյ ձեր բոլոր առաջարկութիւնները կը կատարվին։

Այդ ի հարկէ շատ լաւ կը լինէր, բայց նոյն իսկ ինքնավարութիւնը ստանալու համար պէտք է պատրաստվել, ինքնավարութիւնը պէտք է պահանջել և ոչ թէ սպասել որպէս շնորհ Թիւրքիայի կամ Եւրօպայի կողմից։ Եթէ հայերը չը պատրաստվին, այլ միայն սպասեն,—գուցէ երբէք ոչինչ չեն ստանայ։

Մենք մեր առաջին յօդուածում ասեցինք որ Թիւրքաց Հայաստանում տիրում են երկու գլխաւոր չարիքներ. ամենալաւ ոյժերի անդադար գաղթականութիւնը Հայաստանից և հայաստանցի բոլոր ցեղերի միմեանց մէջ երկպառակութիւններն ու թշնամութիւնը։

Այդ երկու չարիքներին առաջն առնելու համար մի միջոց կայ միայն՝ լուսաւորութիւնը միացած երկրի տնտեսական հաստատ զարգացման հետ։ Տնտեսապէս զարգացնելով երկիրը՝ սպառող գաղթականութեանը վերջ կը դրվի, ուրիշ կողմից Հայաստանը միայն այն ժամանակ կը կարողանայ իր համար պահանջել ինքնավարութիւն, երբ հայաստանցի բոլոր ցեղերի միմեանց մէջ ունեցած երկպառակութիւններին վերջ կը դրվի և կը հաստատվի կատարեալ համերաշխութիւն։ Իսկ համերաշխութիւնը մի երկրի միմեանց մէջ թշնամի ցեղերի կարող է կատարվել միմիայն տնտեսական զարգացման հողի վրա։ Ոչինչ չէ կապում այն աստիճան մի երկրի բոլոր այլակրօն և այլացեղ ազգերին, որքան ընդհանուր հասարակական և տնտեսական շահերը։

Երբ որ Հայաստանի իւրաքանչիւր բնակիչը, ինչ կրօնի կամ ցեղի և պատկանէր նա, զգայ իրան հայաստանցի,—այն րօպէից Հայաստանի փրկութեան գործը կատարված կը լինի և Հայաստանը ինքն, առանց դրսի օգնութեան ձեռք կը բերի իր ցանկացած ինքնավարութիւնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մոսկվա, 30 ապրիլ

«Մշակի» 72 համարում «Քանի մի խորհրդածութիւններ Լազարեանց ճեմարանի առիթով» հատուածի մէջ հեղինակն կասէ թէ «Եգիպտոսի խէդիւի արտաքին գործոց վաղեմի մինիստր Նուբար փաշան Լազարեան ճեմարանում է ուսում ստացել և կրթութիւն։ Այդ տեղեկութիւնն ստոյգ չէ. որովհետև Նուբար փաշան յիշեալ ուսումնարանում ոչ ուսում և ոչ կրթութիւն է ստացել։ Երբեմն մէկ Նուբարով անուն Թիֆլիսցի աշակերտ եղել է այդ վարժարանը, որ առանց աւարտելու իր ուսումը վերադարձել է իր հայրենիքը։ Երևի յօդուածի յիշեալ հեղինակն առած է Նուբարովի անունն Նուբար փաշայի տեղ։

Յիշեալ ճեմարանն «յիսուն» տարեկան չէ, ինչպէս կասէ հեղինակն, այլ վաթսուն և հինգ, որովհետև հիմնված է 1815 ին։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 7 մայիսի

Մեծապատիւ խմբագիր, խնդրեմ ձեր պատուական թերթի միջոցաւ, յայտնել իմ խորին շնորհակալութիւնը հետեւեալ յարգելի պարոններին, որոնք բարեհաճեցին բժիշկ Բ. Նաւասարդեանի առաջարկութեամբ օգնել ինձ, տալով միջոց գնելու պ. Անանեանից ազգային աւանդութեանց ժողովածուն, որի մասին յիշած էր «Մշակի» մանր լուրերում.

Գ. պ. Ռ. Նազրեանց, Գ. Սունդուկեանց, Ս. Մէլիք-Մէհրաբեանց, բժշկապետ Շահ-Պարոնեանց, բժշկապետ Քուչարեանց, բժիշկ Շահազիզեանց, Ա. Եսայեանց, Գ. Հէջուբեանց, Ն. Տէր-Յակոբեանց, Յ. Մէլիք-Բէգլարեանց և պատուելի տիկին Եղիսաբէթ Տէր-Դաւիթեանց։

Տ. Նաւասարդեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ այս օրերս կալանաւորվեցաւ Ս. Պետերբուրգում մի ծովային օֆիցէր Սուխանով ազգանունով, որ մեղադրվում է յեղափոխական գործերի մասնակցութեան մէջ և դինամիտ արքունի պահեստներից յափշտակելու մէջ։

—

Վերջին օրերս ստացած ռուս լրագիրները աւելացնում են, որ բացի Սուխանովից կալանաւորվեցան դարձեալ երկու ծովային օֆիցէրներ և մի քանի օֆիցէրներ զօրքերի ուրիշ մասերից։

—

Բոլոր լրագիրները մեծ համակրութեամբ են խօսում կոմս Լօրիս-Մէլիքովի գործունէութեան մասին և մեծ ցաւ են յայտնում ներքին գործերի մինիստրի պաշտօնից նրա հրաժարվելու մասին։

—

է, մէկ փոքրիկ մասն է մեծ ամբողջի, որ հասարակութիւն է անուանվում. Թող երեխաներ ունեցող ամեն մի կին կրթի նրանց այդպէս, և հաւատացած կացէք, որ հասարակութեան մէջ չեն լինի այն խառնվութիւնները, որոնք, յայտնի դարաշրջաններում, հիմնովին խախտում են հասարակական կազմակերպութեան հին շինուածքը։ Հայ կինը զօրութիւն է ստանում նոյնպէս իր կրօնական համոզմունքների մէջ, իր ժառանգական աւանդութիւնների սէրի մէջ և իր բարքերի մաքրութեան մէջ։

Կը խնդրեմ ձեզ մտաւորապէս փոխադրվել 25 տարուց առաջ ժամանակներում. Գործողութիւնը կատարվում է հին Վրաստանի քաղաքներից մէկի մէջ. երկու մայր գերեզման են փորում. Նրանց մօտ դրված է ամենակոպիտ շինված մէկ հասարակ փայտեայ դագաղ։ Այլ ևս քահանան չէ երեւում, որը, դիակի վրա հրաժարական աղօթքը կարդալուց յետոյ, տուն է վերադարձել։ Ամենաաղքատիկ դրութիւն է։ Երկու վարձկան մշակներ բերեցին ննջեցեալին, որին նրանք շտապով հողի մէջ կը թաղեն, և յետոյ երգ երգելով տուն կը վերադառնան կամ մօտակայ գինետուն կերթան։ Նոր լցրած գերեզմանի մօտ կանգնած է տասն տարեկան մի փոքրիկ աղջիկ,—նա դառը կերպով լաց է լինում. Նրա փոքրիկ կուրծքը լացից պատառվում է և ժամանակ առ ժամանակ նա սիրտ կտրատող ձայնով աղաղակում է՝ մայրիկ.—ես այլ ևս մայր չունեմ. այլ ևս ոչ ոք չը կայ, որին կարողանայի սիրել։ Այս մանկան ցաւը—սիրտ է կտրատում. Նա ծնկաչոք ընկաւ և կպցրեց երեսը աշնանային անձրևով թրջված հողին, և նրա խղճուկ մարմինը, որ վատ է պաշտպանված ցնցոտիներով, դողում է ցրտից և նրան տիրած յուսահատութիւնից։ Բայց մանկական մարմինը պատող այդ ցնցոտիների կոյտից, դուրս է նայում հրաշալի գեղեցկութիւն ունեցող մէկ գլուխ՝ երեսի քնքոյշ գոյն, մեծ սև աչքեր, գեղեցիկ աղեղնաւորված յօնքերով. գեղեցիկ է քթի գծագրութիւնը. ուսերի վրա ծածանվում են հիանալի մազեր։ Խոնաւ հողի վրա այդ թշուառ երեխան նման է տրտմութեան հրեշտակի գեղեցիկ քանդակին. բայց մարդիկը, շտապով լցնելով հողը այն բացուածքի մէջ, ուր իջեցրին նրա մօր նշխարքը, մնում են սառնասիրտ դէպի այս տեսարանը. Նրանք նրան չեն նկատում. Գործը վերջացնելով, նրանցից մէկը բռնեց երեխայի ձեռքից և կոպիտ կերպով ասաց.

—Դէ, աղջիկ, գնանք քաղաք կենդանիների մօտ, իսկ մեռածներին հանգիստ թողնենք։ Ինչքան էլ լաց լինես, արտասուքներով յարութիւն չես տայ մօրդ։

Մանուկը հետեւեց գերեզման փորողներին։ Քաղաքը մտնելով, նրանք գնացին իրանց ճանապարհով և աղջկան թողեցին ճակատագրի կամքին, բաղդ ցանկանալով նրան։ Երևի, որբը սովից կը մեռնէր, եթէ նրան չը որդեգրէր մի պառաւ այրի կին, որը մի քանի հարիւր րուբլ դրամագլուխ ունէր։ Վերև նկարագրած տխուր անցքից յետոյ հինգ տարի անցաւ։ Փոքրիկ որբուհին երեւելի գեղեցկուհի դարձաւ։ «Ես չեմ մեռնի մինչև չապահովացնեմ քեզ, շատ անգամ ասում էր նրան պառաւ կինը։» Բայց մի գեղեցիկ առաւօտ կարճատև հիւանդութիւնից յետոյ, բարերարուհին յաւիտենականութեան գիրկը մտաւ։ Նրա մահից յետոյ ոչ կտակ մնաց և ոչ փող։ Կտակը գրված չէր, իսկ փողերը—ես համարձակ կասեմ այս—վերցրեցին նրանք, որոնք մեռնողի վերջին րօպէներին ներկայ էին։ Այս պատմութեան հերոսուհին երկրորդ անգամ որբացաւ. Բայց, իր աչքեցնող գեղեցկութեան շնորհով, նա հանդիպեց այնպիսի մարդկերանցից մէկին, որոնք սիրում են թշուառ աղջիկների անմեղութիւնը և պատիւը ոտնակոխ անել։ Այդ մարդը սկսեց ամենավիրաւորող առաջարկութիւններ անել նրան. բայց նա արհամարհանքով մերժեց դրանք։

Այնուամենայնիւ, աղքատութիւնը արդէն պատրաստվում էր տիրապետել իր որսին, որին նա հինգ ամբողջ տարիներ հանգիստ էր թողել։ Անառակը, իր կողմից, հսկում էր իր զոհին։ Քաղցը, մտածում էր նա, կը հասցնի նրան այնտեղ, որ նա անձնատուր կը լինի։ Բայց նա սխալվում էր. աղջիկը խուլ մնաց նրա բոլոր համոզեցուցիչ խօսքերին։

Կան մարդիկ, որոնց կիրքը աճում է այնքան, որքան որ արգելքներն են բազմանում. Տեսնելով, որ թշուառ աղջիկը անողոք է, այս անգամ իսկապէս սիրահարված կրքոտ Դոն-Ժուանը, առաջարկութիւն արաւ նրան. բայց մեծ եղաւ նրա զարմանքը, երբ բարկութեամբ մերժեցին նրա առաջարկութիւնը։

—Մենք զանազան դաւանութեան ենք պատկանում, ասաց նրան երիտասարդ աղջիկը։

—Ես քո հաւատը կընդունեմ։

—Ես հաւատափոխի հետ չեմ ամուսնանայ։

—Ես քեզ սիրում եմ։

—Սուտ է. երբ տղամարդը սիրում է կնոջը, նա նրան յարգում է, և ոչ թէ ցանկանում է նրան խաբել։

—Կենդանի թէ մեռած դու իմս կը լինես, աղաղակեց մերժված սիրահարը։

Այդ սպառնալիքը սարսափեցրեց երիտասարդ աղջկան. Նա հասկացաւ, որ կորած է։

Այս պատմութիւնը վերաբերվում է այն ժամանակին, երբ գաւառական անկիւնում պօլիցիան մէկ տեսակ միֆ էր, երիտասարդ աղջիկ փախցնելը շատ հեշտ բան էր և դա անդադար կատարվում էր։ Մի այդպիսի վտանգ ևս սպառնում էր որբին, նա չէր կարող կասկածել այդ բանի մէջ։

Մի գեղեցիկ, աշնանային առաւօտ նա գնաց հայոց փոքրիկ եկեղեցի, քառորդ ժամ աղօթեց և հաստատ քայլերով գնաց դէպի կուրի ափը։ Մի քանի րօպէից յետոյ գետը իր գիրկն ընդունեց թշուառ աղջկայ մարմինը, որը մահը գերադասեց անպատուութեանը։

Ձը կարծէք, որ այս օրինակը հնարել եմ նրա համար, որ բոլոր վերոյիշեալներին աւելի նշանակութիւն տամ. միք համարի այդ բանը նոյնպէս որպէս մէկ եզական փաստ. գիւղական հայկանանց մէջ քաղաքային նրբացրած գիտութիւնից աւելի նշանաւոր բան կարող է գտնվիլ, որ է՝ բարոյական կրթութիւնը, որի մէջ գլխաւոր դերը խաղում է չը փչացած և իր պարտաւորութիւններին հաւատարիմ սիրտ։

Խորը քննելով հայ կանանց ընտանեկան բարքերը, դուք չէք զարմանայ տեսնելով, որ ժողովրդի մասսայի մէջ գերակշռում է բարոյականութիւնը և բարօրութիւնը։ Ինձ չափազանց ախորժելի էր համոզվել այդ բանում իմ Կովկաս եղած ժամանակ։ Թող այդ երկիրը, որը, իր բախտով, կարողացաւ երկար տարիների ընթացքում ազատվել Եւրօպայի յուզմունքից, թող այսուհետև էլ հեռու մնայ այդ բանից և թող իրանով մի գեղեցիկ ժողովրդի օրինակ ցոյց տայ, որը բոլորովին նուիրել է իրան խաղաղ պարապմունքներին և որը իր մտաւոր զարգացման համար գործ է ածում իր խելացի և բարոյական ազգաբնակութեան բոլոր գործունէութիւնը։

***